# Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար <<Շինանյութերի>> ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/7-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 10:00

*Մասնակցում էին՝*

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Աղավնի Բուդույան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄհՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/7-01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման մասին.**

1.1. Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի նոյեմբերի 23-ին, ժամը 10:00-ին:

**2 Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.**

2.1 Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

2.2 Սույն գնման մասով պատասխանատու ստորաբաժանումը շինանյութերի գնման՝ հաստատված հայտով սահմանել է կողմնորոշիչ առավելագույն գներ.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի կողմնորոշիչ առավելագույն գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Այլ զանազան շինարարական նյութեր | 751500 |
| 2 | Ցուցանեկեր | 225000 |
| 3 | ԴՍՊ | 370000 |

3 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | <<ԷԿՈՄԻՔՍ>> ՍՊԸ | ք. Երևան, Լենինգրադյան 31/1 բն. 28<br>Հեռ. (093)028379 |
| 2 | <<էլիպս գրուպ>> ՍՊԸ | ք. Երևան,Լենինգրադյան 23/13, մուտք 2, 50<br>հեռ. (077)610400 |
| 3 | <<ՏԻՍԱ>> ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Նորագավիթ, 4 փող. 30/2<br>Հեռ. (077) 064545 |
| 4 | Ա/Ձ Հովհաննես Մրտիրոսյան | ք. Երևան, Մեծարենցի 89<br>Հեռ. (091)407789 |
| 5 | <<ԱՐՄ-ՄԱՐ>> ՍՊԸ | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ 2ա/10<br>Հեռ. (094) 502010 |

3.1 Համակարգում 14.11.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 <<ԷԿՈՄԻՔՍ>> ՍՊԸ-ի, <<էլիպս գրուպ>> ՍՊԸ-ի, <<ՏԻՍԱ>> ՓԲԸ-ի և Ա/Ձ Հովհաննես Մրտիրոսյանի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.2 Համակարգը թույլ չի տվել բացել <<ԱՐՄ-ՄԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ միաժամանակ այն համարելով հետագա գնահատման համար անընդունելի:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

5.1 <<էլիպս գրուպ>> ՍՊԸ-ի, <<ՏԻՍԱ>> ՓԲԸ-ի և Ա/Ձ Հովհաննես Մրտիրոսյանի կողմից ներկայացված հայտերը /հայտերում ներառված փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5.2** <<ԷԿՈՄԻՔՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես՝

ա/ <<ԷԿՈՄԻՔՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված բոլոր փաստաթղթերը հաստատված չեն տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ. դրանք հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն ներկայացված չէ տվյալ անձին հայտը ստորագրելու լիազորություն տվող համապատասխան փաստաթուղթ:

բ/ <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը>>՝ Հավելված 3.2, կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

գ/ <<Ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը>> Հավելված 3.5, կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովը որոշեց.**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. նոյեմբերի 25-ին, ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**7. Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել համապատասխան մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ ______________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ ______________ Սարգիս Արմենակյան

______________ Կարեն Մելքոնյան

______________ Արման Ղուկասյան

______________ Աղավնի Բուդոյան

Քարտուղար՝ ______________ Մարիամ Հայրապետյան